ԱՐՇԱԼՈՒՅՍ ՂԱԶԻՆՅԱՆ

ՀԱՎԱՍՏԻՆ ԵՎ ՀԱՎԱՆԱԿԱՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ա.

Համեմատաբար քիչ են Գրիգոր Նարեկացու մասին կենսագրական տեղեկությունները: Դրանք կարելի է պայմանականորեն բաժանել երկու աղբյուրների՝ մատենագրական և բանահյուսական: Մատենագրական տեղեկություններից ամենից առաջ կարևոր են Նարեկացու վկայությունները: Թեև շատ սուղ, բայց առանձին տեղեկություններ կան նաև մի քանի մատենագիրների և գրիչների հիշատակարաններում: Նարեկացին ինքնակենսագրություն չի թողել: Ժամանակակիցներից որևէ մեկն էլ չի ավանդել գոնե նրա համառոտ կենսագրությունը:

Հայ ժողովուրդը Նարեկացու մասին հյուսել է մի շարք ավանդություններ, զրույցներ, երգեր[1]: Թեև դրանք հիմնականում ունեն հրաշապատում բնույթ, բայց այդ «ավանդություններն ու զրույցները,—ինչպես գրել է Արամ Ղանալանյանը,—զերծ չեն նաև պատմական ատաղձից»[2], և ժողովուրդը հավատարիմ մնալով դարաշրջանի ոգուն՝ «նրան դարձրել է սեփական նվիրական հույզերի ու ապրումների մարմնացումը, իր երազանքների ու ակնկալությունների իրականացնողը, նրա միջոցով մերկացրել ու դատապարտել է չարիքն ու անարդարությունը, հաստատել ու փառաբանել բարին ու արդարը»[3]:

Բանահյուսական այդ աղբյուրները ժողովրդական հիշողության ուրույն վավերականներ են Նարեկացու մասին: Առանձին կետեր կարող են շրջման եզրեր ունենալ պատմական փաստերի հետ: Դրանցից կարելի է արտածել ինչ-որ հավանական, բայց ոչ երբեք հավաստի կենսագրություն:

---

[1] Տես Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 9861, էջ 3ա—22բ: Տես նաև՝ **Ա. Ղանալանյան,** Ավանդապատում, Երևան, 1969, էջ 306—320:

[2] **Ա. Ղանալանյան,** Ավանդապատում, էջ ՃԽՍ:

[3] Նույն տեղում, էջ ՃԽԴ:

Նարեկացու վարքը, որ նախապես ստեղծվել է մատենագրական տվյալների հիման վրա, հետագայում ընդարձակվել է ժողովրդական ավանդությունների հաշվին՝ հավաստին լրացնելով հավանականով: Դա միանգամայն հարիր էր վարքագրության ավանդույթին:

Նարեկացու մասին առաջին սեղմ ակնարկը գրել է նշանավոր մատենագիր և հասարակական-եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացին (1153—1198): Ակնարկը Լամբրոնացու ինքնագիրն է՝ գրված 1173 թվին և վերնագրված է այսպես. «Վարք սրբոյ առնն Աստուծոյ Գրիգորի Նարեկացւոյ»[4]: Հետաքրքիր է, որ այս պարզ վերնագիրը աստիճանաբար ընդունել է միջնադարի համար պատշաճ տարազ. «Վարք երանելոյն սրբոյ առն Աստուծոյ Գրիգորի Նարեկացւոյ, զոր արարեալ է սուրբ արքեպիսկոպոսին տէր Ներսեսի՝ առաջնորդի սուրբ ուխտիս Սկևռայի»[5]:

Ի՞նչ կարելի է ասել այս վարքի մասին: 1-ին, Լամբրոնացին իր տվյալները քաղել է Նարեկացու մի քանի գործերի և, առաջին հերթին, Ապարանից Խաչի պատմության հիշատակարանից: 2-րդ, նա իմացել է, որ Անանիա Նարեկացին եղել է Նարեկավանքի առաջնորդը և Նարեկացու մոր հորեղբայրը: Այլ կերպ ասած՝ մոր կողմից Նարեկացու պապեղբայրը: 3-րդ, Գրիգոր և Հովհաննես Նարեկացի եղբայրները սնվել, դաստիարակվել և կրթություն են ստացել Նարեկավանքում: 4-րդ, Գրիգոր Նարեկացին գրել է Մատյան ողբերգության երկը՝ բաղկացած 95 գլխից, գրել է նաև ներբողներ, մեկնություն և այլն: 5-րդ, Գրիգոր Նարեկացին ապրել և ստեղծագործել է Նարեկավանքում, բյուզանդական Վասիլ (976—1025) և Կոստանդին (976—1028) եղբայրների կայսրության ժամանակ: 6-րդ, Հովհաննես Նարեկացին եղել է Գրիգոր Նարեկացու անդրանիկ եղբայրը:

Լամբրոնացին թույլ է տվել նաև ժամանակագրական անճշտություններ: Ըստ նրա՝ Նարեկացին ապրել է Վահան Սյունեցի կաթողիկոսի (966—969) և Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունու (1003—1021) ժամանակ: Կաթողիկոսն ու թագավորը ժամանակակիցներ չեն, ինչպես պարզված է բանասիրության մեջ[6]: Լամբրոնացին սխալվել է նաև, գրելով, թե Հովհաննեսը վախճանված է եղել, և Նարեկացին Մատյանը գրել է նրա մահից հետո: Մինչդեռ Մատյանի հիշատակարանում Նարեկացին խոսում է Հովհաննեսի մասին, նշելով, որ ինքը Մատյանը գրել է նրա գործակցությամբ: Չնայած այս վրիպումներին, Լամբրոնացու երախայրիքն ունի ուրույն արժեք: Նախ՝ նա ցանկացել է սրտի խոսք ասել Նարեկացու մասին, որը միշտ էլ բարձրագույն հեղինակություն մնաց նրա համար և ապա՝ հետագայում ոչ մի կենսագիր չի շրջանցել այդ վարքը և, վերջապես, Լամբրոնացին հետաքրքրություն է հարուցել գրելու պատմական նշանավոր ան-

---

[4] Մատենադարան, ձեռ. 1568, էջ 119ա—բ: Տես նաև՝ **Գրիգոր Նարեկացի,** Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 170:

[5] Մատենադարան, ձեռ. 5135, էջ 259բ:

[6] 1190 թ. Սամվել Սկևռացին, ընդօրինակելով Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց» երկը, հեղինակի մասին գրել է այսպես. «Փոքր ինչ թողի ձեզ զպատմութիւն կենաց սորին ընթացից, զի մի մնասցէ տարակոյս յառաջել ժամանակին սորին քընոողի ովն և ուստն և զիարդն, որպէս և մեք այսաւր ունիմք զբազում հարց մերոց և վարդապետաց Հայոց, այսինքն՝ զԴաւիթ Ներգինեցի և զԳրիգոր Նարիկեցի և զՄովսէս Խորենացի և զայլս, որոց ի բանից պարարտութենէ զուարճանամք և զիարդ կենաց և վարուց փափագելով գիտել՝ ոչ ունիմք և ոչ մի բան վասն երանելեացն պատմութիւն» (**Գ. Հովսեփյան,** Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 951, այունակ 549):

ձերի վարքերը[6]: Այս վարքից է ծագում մեկ այլ խմբագրություն, որի հնագույն օրինակը հայտնի է 1286 թվականին գրված ձեռագրից (Մատենադարան, ձեռ. 5135, էջ 259բ—261բ): Այստեղ հայտնի փաստերին ավելացվել է մեկ փաստ ևս՝ Նարեկացու հոր՝ Խոսրով Անձևացու անունը: Փորձ է արվել նաև գնահատության խոսք ասելու Մատյանի նշանակության մասին:

Փոփոխություններ կատարվել են նաև վարքի հայսմավուրքային տարբերակների մեջ[7]: Նշված է Նարեկացու մահվան տարեթիվը՝ 1003: Օգտագործված են ֆողովրդական ավանդություններ, պատմական փաստեր, որոնցից կարևոր է Սենեքերիմ Արծրունու կողմից Վասպուրականը բյուզանդական Վասիլ Բ կայսրին տալու և փոխարենը Սեբաստիան ստանալու մասին փաստը և այլն: Վարքի վերջնական խմբագրությունը պատկանում է Հարություն Ավգերյանի (1774—1854) գրչին[8]: Գրականության պատմության մեջ Նարեկացու կենսագրությունը գրված է այս աղբյուրների օգտագործմամբ:

Հայտնի չէ Նարեկացու ծննդյան ստույգ տարեթիվը: Այդ տարեթիվն ընկնում է 940—951 թվերի միջև: Բացառություն է կազմում Հակոբ Նալյանի կարծիքը, որը կարելի էր թյուրիմացություն համարել, եթե համոզմունք չլիներ նրա համար: Ըստ Նալյանի՝ «ծնաւ սուրբն Գրիգոր ի ԴՃԼԵ (986) թուականիս Հայոց, ի ժամանակս Վասլի և Կոստանդեա», ապա և՝ «որոյ ամք կենաց հասակին՝ հաւասար Փրկչին մերոյ ամաց ԼԳ (33) յարդարեցան»[9]:

Քննական մոտեցման առաջին փորձն արել է Միքայել Չամչյանը: Ըստ նրա՝ Նարեկացին «ծնաւ ի թուին Հայոց իբր Ն (400) այսինքն է յամի տեառն 951»[10]: Նարեկացու ծննդյան այս թվականը Չամչյանը նշել է նաև Խոսրով Անձևացու մասին խոսելիս[11]: Չամչյանը մերժում է Նալյանի վարկածը՝ իբր Նարեկացին մահացել է 33 տարեկան. «կեանք նորա տևեաց ոչ պակաս, քան զյիսուն ամ»[12]:

Գիտական ավելի ճիշտ մոտեցում ունի Գաբրիել Ավետիքյանը (1750—1827): Նա մերժում է 951 թվին Նարեկացին ծնված լինելու վարկածը[13]: Ըստ Ավետիքյանի՝ Նարեկացին պետք է ծնված լինի այդ թվականից առաջ: Որպես ապացույց՝ նա հենվում է Խոսրով Անձևացու Պատարագի խորհրդի մեկնության հիշատակարանի վրա, որը գրել է Գրիգոր Նարեկացին: Հայտնի չէ, թե Նարեկացին երբ է ընդօրինակել: Հիշատակարանում նա հայտնում է, որ իր հոր այդ մեկնության առաջին **գծագրությունը** արել է իր եղբայր Սահակը «ՅՂԹ թուականութեանս Հայոց», այսինքն՝ 950 թվին: Եվ որովհետև Անձևացին թե Պատարագի խորհրդի և թե Ժամակարգության մեկնությունները գրել է եպիսկոպոս դառնալուց հետո, նշանակում է՝ Գրիգորը պետք է ծնված լիներ այդ թվականից առաջ: Ուրեմն՝

---

[7] «Գիրք որ կոչի Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ ԳՃՂԳ—ԳՃՂԴ:

[8] «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հ. Ե, Վենետիկ, 1813, էջ 321—329:

[9] **Հ. Նալյան,** Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 3:

[10] **Մ. Չամչյան,** Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 852:

[11] Նույն տեղում, էջ 839:

[12] Նույն տեղում, էջ 857:

[13] «Նարեկ աղօթից. համառօտ և զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ և այժմ երկրորդ անգամ յաւելուածով, աշխատասիրութեամբ նորին տեառն հ. Գաբրիէլի **Աւետիքեան** աթոռակալ վարդապետի», Վենետիկ, 1827, էջ 543—544:

Նարեկացին մինչև 950 թիվը գեթ պետք է լիներ 6—7 տարեկան: Հետևաբար, ըստ Ավետիքյանի, նա պետք է ծնված լիներ 943—944 թվականներին:

Այնուհետև, գտնելով, որ Երգ երգոցի մեկնությունը Նարեկացին գրել է 977 թվին, իսկ Մատյանն ավարտել է 1002/1003 թթ., Ավետիքյանն ընդունում է, որ այդ ժամանակ, Մատյանն ավարտելու տարին, պետք է լիներ վաթսունն անց: Այս հաշվարկների համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ Նարեկացու հայրը 950 թ. արդեն եղել է եպիսկոպոս: Սա նշանակում է, որ ոչ միայն մինչ այդ պետք է ծնված լիներ Գրիգորը, որ Անձևացու կրտսեր զավակն էր, այլև այն, որ Նարեկացու մայրը պետք է վախճանված լիներ: Անձևացին եպիսկոպոս կարող էր դառնալ միայն կնոջ մահից հետո:

Արդ, ե՞րբ է եպիսկոպոս ձեռնադրվել Խոսրով Անձևացին: Այս հարցին անդրադարձել է Գալուստ Տեր-Մկրտչյանը[14]: Նա ապացուցում է, որ Անանիա Մոկացին, որը եպիսկոպոս է ձեռնադրել Խոսրով Անձևացուն, կաթողիկոս է դարձել 941 թվին: Եվ որովհետև Անձևացին, ինչպես վկայում է Նարեկացին, 950 թ. արդեն եպիսկոպոս էր, հետևաբար, ըստ Տեր-Մկրտչյանի՝ Անձևացու ձեռնադրությունն ընկնում է 941—949 թթ. միջև, իսկ Նարեկացու ծննդյան տարեթիվը 940—949 թթ. միջև[15]:

Մանուկ Աբեղյանն ընդունում է Տեր-Մկրտչյանի այս վարկածը: «940 թվից շատ առաջ չի կարելի դնել Գրիգորի ծնունդը,—գրում է Աբեղյանը,—որովհետև Ողբերգության մատյանի մեջ ինքն իրեն 1001—1003 թվականներին, թեպետ հասակն առած, բայց ծեր չի համարում»: Հետևաբար, ըստ Աբեղյանի Նարեկացին պետք է ծնված լինի, «940-ական թվականներին, ավելի շուտ՝ այդ թվականների երկրորդ հնգամյակին»[16]:

Մկրտիչ Մկրյանը հետևում է Նարեկացու ծննդյան և մահվան ավանդական թվականներին. «Նարեկացին ծնվել է 951 թվականին, վախճանվել է 1003 թվականին»[17]: Մկրյանին համոզիչ չեն թվում ոչ Տեր-Մկրտչյանի և ոչ էլ Աբեղյանի առաջարկած մոտավոր տարեթվերը: «Նախ՝ ըստ Օրմանյանի, Անանիան կաթողիկոս է դարձել ոչ թե 941 թվին, այլ 946 թվին,—գրում է նա,—այնուհետև՝ թեպետ 950 թվին գրված Պատարագի խորհրդի հիշատակարանում Խոսրովը եպիսկոպոս է հիշվում, բայց դա բոլորովին էլ չի ապացուցում, որ 950 թվին նա անպայման եպիսկոպոս էր, որովհետև հիշատակարանը 950 թվին չի գրված, այլ հետագայում, երբ Խոսրովը կարող էր արդեն եպիսկոպոս դարձած լինել»[18]:

Ճիշտ է, որ Մաղաքիա Օրմանյանը Անանիայի կաթողիկոսության տարիները դնում է 956—968 թթ.[19]: Բայց Օրմանյանը սխալվում է, և իրավացի է Գ. Տեր-Մկրտչյանը: Հայտնի է, որ Անանիա Մոկացին Խոսրով Անձևացուն մեղադրել է աղանդավորության մեջ: Իր թղթերից մեկում նա գրել է. «Ի ՆԳ (454) թուականիս և ԴԺ-ան (14) ամի մերոյ դիտապետութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր

---

[14] «Արարատ», 1897, էջ 92—93:

[15] Նույն տեղում, էջ 92:

[16] **Մ. Աբեղյան,** Երկեր, հ. Գ, Երևան 1968, էջ 576:

[17] **Մ. Մկրյան,** Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը (տես **Գրիգոր Նարեկացի,** Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց **Մկրտիչ Խերանյան,** Երևան, 1960), էջ Գ:

[18] **Մ. Մկրյան,** Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 114:

[19] **Մ. Օրմանյան,** Ազգապատում, Ա հատ., Գ գիրք, Կ. Պոլիս, 1912, էջ 1085:

մեր նմա զվիճակն Անձևացեացն, այր համեստ և գիտնաւոր և ալեօք ծերութեամբ զարգացեալ»[20]: Պարզ է, որ 941 թ. Անանիան կաթողիկոս էր: Պարզ է, որ Անձևացին արդեն եպիսկոպոս էր: Մկրյանի առարկությունը կորցնում է իր ուժը:

Մկրյանի փաստարկը, թե Պատարագի խորհրդի մեկնությունը եթե անգամ գրվել է 950 թվին, ապա դա չի նշանակում, թե Անձևացին այդ թվին անպայման եպիսկոպոս էր, չի դիմանում քննադատության: Հավաստի է, որ Անձևացին այդ մեկնությունը գրել է եպիսկոպոս դառնալուց հետո և, ինչպես ինքն է ասում, գրել է եկեղեցու խախտված կարգերը վերականգնելու համար: «Համարձակեցայ առ այս յանդգնաբար ի հարկե,—գրում է Անձևացին,—ոչ զի անձին փառս ստացայ, այլ զի զեպիսկոպոսութիւն վիճակեցայ. և ի վիճակեալսն տգիտութիւն ի յոլովսն վարկայ և բանիւ ամենայն ումեք զբովանդակ զայս ծանուցեալ՝ անհնարին գիտացի, պատշաճ համարեցայ ի գրի արկանել, զի թերևս այսպէս դիւրին առ ուսանել արարից կամողաց»[21]:

Անձևացին չի ասել, թե երբ է եպիսկոպոս դարձել: Գրիգոր Նարեկացին գրում է, որ իր հայրը Պատարագի խորհրդի մեկնությունը գրել է 950 թ.: Ոչ մի հիմք չկա չհավատալու Նարեկացու այս վկայությանը: Սա ընդունելի է անվերապահորեն: Անվերապահ է նաև, որ Անձևացին այդ թվականից առաջ և Անանիա Մոկացին կաթողիկոս դառնալուց հետո, ձեռնադրված էր եպիսկոպոս: Այսպիսով, Գրիգոր Նարեկացու ծննդյան տարեթիվը տատանվում է 940—950 թթ. տասնամյակի միջև: Ըստ իս՝ հավանական մոտավոր տարեթիվը մնում է շուրջ 945 թվականը:

Հայտնի չէ նաև Նարեկացու ծննդավայրը: Հավանական է համարվում, որ նա ծնվել է Վասպուրական աշխարհի Ռշտունիք գավառի Նարեկ գյուղում: Ենթադրվում է, որ նա կարող էր ծնված լինել Անձևացյաց գավառում, որի եպիսկոպոսն էր հետագայում նրա հայրը՝ Խոսրով Անձևացին: Հավաստի է, որ Գրիգոր Նարեկացին վաղ մանկությունից իր անդրանիկ եղբայր Հովհաննեսի հետ ուսանել է Նարեկավանքում, որի հիմնադիրն ու առաջնորդն էր Անանիա Նարեկացին, ինչպես վերն ասվեց, Գրիգոր Նարեկացու մոր հորեղբայրը: Գրիգորն ավարտել է Նարեկավանքի դպրոցը, ձեռնադրվել նախ քահանա և ապա օծվել վարդապետ: Այստեղ էլ նա ծավալել է իր գրական գործունեությունը, զբաղվել մանկավարժությամբ, ինչպես նաև գրչությամբ:

Նարեկացին եղել է բազմաշնորհ անհատականություն: Նա ստացել է ժամանակի համար փայլուն կրթություն: «Հրաշալի էր և յաստուածաբանական վարդապետութեան և յատենախօս քարոզութեան, պերճ և առատ բանիւք և քաղցրաբուղխ շրթամբք, նոյն և յաջողակ ի գիր և զօրաւոր, որով զարմացուցանէր զմերձաւորս և զհեռաւորս, և քարոզեալ լինէր համբաւ սրբութեան և իմաստութեան նորա ընդ ամենայն աշխարհս Հայոց առաջի թագաւորաց և կաթողիկոսաց ժամանակին[22], ասված է նրա վարքի խմբագրություններից մեկում: «Նարեկացին,—գրել է երաժշտագետ Նիկողոս

---

[20] «Արարատ», 1897, էջ 276:

[21] «**Խոսրովու Անձևացեաց** եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից պատարագին», Վենետիկ, 1869, էջ 66—67:

[22] «Վիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հ. Ե, էջ 322—323,

Թահմիզյանը,—իր տաղերը ինքն է հղացել որպես երաժշտական բանաստեղծական ստեղծագործություններ»[23]:

Նարեկացին եղել է բուռն ընթերցասեր: Ապարանից Խաչի պատմության հիշատակարանում նա խնդրում է Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսին, որի պատվերով գրել էր այդ գործը՝ լրացնել թերին և աղոթել իր համար, որ «յարաժամ դեգերիմ յընթեռնուլն, իսկ գործ՝ և ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ»[24]: Նարեկացին աստվածաշնչական գրքերից շատերը թերևս իմացել է անգիր: Ընթերցել և խորամուխ է եղել հայրաբանական և փիլիսոփայական գրականության մեջ: Հայ մատենագրությունը գիտեր Կորյունից և Ագաթանգեղոսից սկսած մինչև Հովհաննես Դրասխանակերտցի, Անանիա Նարեկացի և իր ժամանակի հեղինակները: Նա պետք է ծանոթ լիներ նաև արաբական գրականությանը:

Իմացե՞լ է արդյոք օտար լեզուներ: Թեև ուղղակի վկայություններ չկան, բայց չպետք է տարակուսել, որ նա տիրապետել է հունարենին: Հաստատ է, որ հունարեն իմացել են Խոսրով Անձևացին, Անանիա Նարեկացին և Նարեկավանքի այլ վանականներ: Հայտնի է, որ 10-րդ դարում հիմնադրվել են մի շարք վանքեր, որոնց կրոնավորներից շատերը հայրենադարձվել էին Բյուզանդիայից: Ռոմանոս Լեկապենոս կայսրը (920—944) իր գահակալության առաջին իսկ տարիներից սկսած՝ «հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս Հայոց,—գրել է Կիրակոս Գանձակեցին,—որք էին յաշխարհին Հոռոմոց, զի ոչ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի»[25]: Սրանք էլ, ըստ Գանձակեցու, հիմնադրում են Կամրջաձորի և Կապուտքարի վանքերը Արշարունիքում, Հոռոմոց վանքը և Դպրեվանքը Ծիրակում և այլն: Նարեկավանքը ևս կառուցվել է այդ ժամանակ, հավանաբար 935—940 թթ.: Ծուկավանքը ևս տով այստեղ են շտապում «ևս և ուսանելոց ոմանց յաշխարհին Յունաց և վարժելոց յիմաստս փիլիսոփայութեան, յորոց միջի անուանի երևեցաւ Անանիա վարդապետ փիլիսոփայ հզօր»[26]: Նշանակում է՝ Նարեկավանքի միաբաններից ոմանք կրթություն էին ստացել Բյուզանդիայում: Եվ առհասարակ «Նարեկավանքը բարի դրացիական հարաբերություններ է ունեցել բյուզանդական եկեղեցու հետ»[27], գրել է Ժան Մաերյանը: Գրական-մշակութային սերտ հարաբերությունները ենթադրում են նաև լեզվի իմացություն: «Ինձ համար որոշակի է,—ավելացնում է Ժան Մաերյանը,—որ Նարեկացին իմացել է հունարեն: Դա ընտանեկան ավանդույթ էր»[28]: Ես բաժանում եմ այս տեսակետը:

Նարեկացին ունեցել է արտաքուստ խաղաղ, բայց ներքուստ փոթորկոտ կենսագրություն: Նա ապրել է հանճարի այն անխուսափելի ողբերգությունը, որ ծնվում է բթամիտ ավանդամոլների հայտնի ու գաղտնի, թունոտ ու քինոտ հալածանքներից: Մատյանում (Բան ՁԳ) Նարեկացին ակնարկում է

---

[23] **Ն. Թահմիզյան,** Կոմիտասը և Նարեկացու տաղերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 3, էջ 43:

[24] «Սրբոյ հօրն մերոյ **Գրիգորի Նարեկայ** վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 422:

[25] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ **Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի,** Երևան, 1961, էջ 84:

[26] **Մ. Չամչյան,** Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 824:

[27] **Grégoire de Narek,** Le livre de prières, introduction, traduction de l'arménien et notes par J. Kéchichian, Paris, 1961, p. 34.

[28] Նույն տեղում, էջ 24:

իր թշնամիների, իրեն ատողների, բանսարկուների մասին: Նա աղոթում է նաև նրանց համար՝ Աստծուց խնդրելով ոչ թե պատժել նրանց «իբրեւ զսուրբս բամբասողաց», այլ ներել նրանց հանցանքները «որպէս զչարս կշտամբողաց եւ իրաւամբք նախատողաց» (Բան ՁԳ, ա): Սա բխում է ոչ միայն չարի փոխարեն բարի հատուցելու ավետարանական պատվիրանից, այլև Նարեկացու՝ իր հանճարի բարձրության գիտակցությունից: Իզուր չէ, որ նա վայելել է եզակիորեն սրբաբարո, առաքինի և արդարամիտ մարդու համբավ:

Նարեկացին եղբայրական սրտառուչ սիրով է սիրել եղբորը՝ Հովհաննես Նարեկացուն: Նա խոնարհ մեծարանքով է խոսում նրա մասին, շեշտելով իրենց հոգեկան ներդաշնակությունը: Մատյանի հիշատակարանում իր և եղբոր մասին նա գրել է այսպես. «իբրեւ զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղակցելով, ոչ միայն հարազատք, այլ եւ միաշունչք, միակրաւնք, համապատիւք, զուգահաւանք, ի քառից աչաց առ մի եւ նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք»[29]: Ուրիշ անգամ նա խնդրում է հիշել իրեն և «զեղբայրն իմ զանդրանիկ զՅովհաննէս ցանկալի անուն ի միում կարգի, որ գիտնականն է և հանճարեղ իմաստասէր, քան զիս առաւել յամենայնի»[30]: Անանիա Նարեկացու մահից հետո Հովհաննեսը ստանձնել է Նարեկավանքի առաջնորդի պաշտոնը: Նա եղել է Նարեկացու առաջին գրաքննադատն ու խորհրդատուն, թերևս նաև առաջին գրիչն ու խմբագիրը: Հավաստի է, որ անդրանիկ եղբայրը միշտ էլ օգնել է կրտսեր եղբորը:

Նարեկացու թվակիր առաջին երկը՝ Երգ երգոցի մեկնությունը գրված է 977, վերջինը՝ Մատյանը 1002 թվին: Ստույգ տարեթվերի այս սահմանագիծն ընդգրկում է ստեղծագործական կյանքի ուղիղ քառորդ դար: Մատյանը գրելիս Նարեկացին իրեն ծեր չի համարում: Նա աղերսում է Աստծուց, որ եթե ինքը հասնի ծերության, ապա այնպես չլինի, որ անարգվեն իր ճերմակ ալիքները (Բան ՁԷ, գ), և ինչպես ասված է Մատյանի միջնադարյան մեկնության մեջ, «Զի չէր ծեր, յորժամ ասէր զայս և աղօթէր վասն հասանել ծերութեանն»[31]: Նշանակում է՝ Նարեկացին մահացել է ստեղծագործական ուժերի վերելքի շրջանում, քանի որ Մատյանն ավարտելուց հետո նա կնքել է իր մահկանացուն:

Վիճելի է նաև Գրիգոր Նարեկացու մահվան թվականը: Ուսումնասիրողները՝ սկսած Մ. Զամչյանից և Գ. Ավետիքյանից մինչև Մ. Աբեղյան և Մ. Մկրյան՝ այդ տարեթիվը դնում են 1003—1010 թթ. միջև՝ Նարեկացու կյանքի տևողությունն ընդունելով 50—60 տարի: Ներսես Լամբրոնացին տարեթիվ չի նշել. «չև ևս հասարակեալ աստ զընթացս կենաց,—գրել է նա,—այլ յերիտասարդական աստիս վախճանեալ»[32]: Վարքի հայամավուրբային տարբերակներից մեկը, որը հայտնի է 1471 թվին գրված ձեռագրից, ունի Նարեկացու մահվան որոշակի տարեթիվ՝ 1003 թվական[33]: Իսկ տպա-

---

[29] Եղբայրասիրության այս բարձր գնահատականը Նարեկացին տվել է նաև բյուզանդական Վասիլ և Կոստանդին կայսրներին. «որք ի մի նկատումն կամաց խորհրդոյ երկեակ մարմնով և միով սրտի կենցաղավարեցան. և որպէս զէութիւն երկուց տարազուց անձին և մարմնոյ ի մի կերպարան շարունակեցան» («Մատենագրութիւնք», էջ 375):

[30] **Գրիգոր Նարեկացի,** Մատենագրութիւնք, էջ 422:

[31] Մատենադարան, ձեռ. 5650, էջ 427բ:

[32] Մատենադարան, ձեռ. 1568, էջ 119բ:

[33] Մատենադարան, ձեռ. 1511, էջ 349բ.

գիր հայսմավուրքում ասված է այսպես. «Բայց չև ևս կատարեալ զընթացս աստի կենացս, այլ երիտասարդական տիս վախճանեալ, ի թուականիս մերում ԴՃԾԲ (1003) ամին»[34]: Նարեկացու լիակատար վարքում նշված է նաև մահվան օրը. «յամի տեառն 1003 և ի թուին Հայոց ՆԾԲ, ի մեհեկի ԻԱ (21), որ յայն ժամանակս հոկտեմբերի 6 կամ ըստ Յայսմաւուրաց՝ փետրվարի 27, ի կաթողիկոսութեան տեառն Սարգսի»[35]:

Այս տարեթիվը հայտնի է նաև մի քանի ժամանակագրություններից. «Թուականին ՆԾԲ (1003) վախճանեցաւ Գրիգոր Նարեկացին»[36]: «Եւ թագաւորեաց Գագիկ՝ եղբայր Սմբատայ, ամս ԻԹ (29), թվին ՆԽԲ (993): Արդ, ի Ժ (10) ամին Գագկայ և ի ԻԷ (27) Վասլի կայսեր Յունաց և Ռ և Դ (1004) մարմնանալոյ տեառն և թվին Հայոց ՆԾԱ (1002) փայլէր իբրև զարեգակն սուրբն Գրիգոր Նարեկացին, որդի Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսին. և յայսմ ամի աւարտեաց զհոգեկեցոյց բանս իւր, զոր այժմ ունի եկեղեցի սուրբ. և ոմանք ասեն, թէ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս Աստուած»[37]:

Հակոբ Նալյանը, ինչպես վերն ասացի, Նարեկացու կյանքի տևողությունը համարել է 33 տարի: «Ամենայն որ սիրէ զիր ինչ,—գրում է նա,—փութով ընթանայ և արագ ժամանէ. իսկ սուրբս Գրիգոր՝ ըստ ամաց Փրկչին ԼԳ (33)-ամեայ անցեաց», «ի ԴՃԾԳ (1004) ամին՝ յաւարտման աղօթից գրքոյս»[38]: Ավետիքյանը Նարեկացու մահվան տարեթիվ չի նշել. «լինէր Գրիգոր աւելի քան զվաթսունամեայ ի յօրինել աղօթիցն»[39]: Նարեկացուն վաթսունամյա են համարել Գ. Զարբհանալյանը, Թ. Գուշակյանը և ուրիշներ: Աբեղյանը գրում է, թե «որտեղից են առնված նրա տարիքն ու մահվան ենթադրական թվականները, այդ հայտնի չէ»[40]: Սա նշանակում է, որ հայսմավուրքային և ժամանակագրությունների տվյալները Աբեղյանը չի համարում ստույգ տեղեկություններ: Օրմանյանը ևս Նարեկացու մահվան թվականը համարում է 1003 թվականը: Հայսմավուրքում նշված ամսաթվի տոմարական հաշվարկն ավելի ճիշտ է Օրմանյանի մոտ. ըստ նրա՝ Գրիգոր Նարեկացին մահացել է 1003 թ. հոկտեմբերի 7-ին[41]: Ըստ իս՝ սա պետք է համարել բոլորից հավանական, թերևս՝ ստույգ և վերջնական:

Նարեկացին թաղվել է Նարեկավանքում՝ Սանդուխտ կույսի եկեղեցու մոտ: 1021 թ. Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի թագավորը իր տիրույթները տվեց Բյուզանդիայի Կոստանդին կայսրին և փոխարենը ստացավ Սեբաստիան: Վասպուրականից գաղթեց բնակչության գրեթե մեկ երրորդը՝ շուրջ չորս հարյուր հազար հոգի: «Ի չուել Սենեքերիմայ,—գրում է Մ. Չամչյանը,—բազում կրօնաւորք ևս գնացին ընդ նմա. ընդ որս և բազում ի միաբանից Նարեկայ վանիցն, առեալ ընդ իւրեանս զմարմին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. և շինեցին սոքա անդ վանս մօտ Ակնայ, զոր և կո-

---

[34] «Գիրք, որ կոչի Այսմաւուրք», էջ ԳՃՂԴ:

[35] «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հ. Ե, էջ 327—328:

[36] «Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ.», հ. Ա, կազմեց **Վ. Ա. Հակոբյան,** Երևան, 1951, էջ 208:

[37] «Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ., հ. Բ, կազմեց **Վ. Ա. Հակոբյան,** Երևան, 1956, էջ 338:

[38] **Հ. Նալյան,** Մեկնութիւն աղօթից, էջ 742:

[39] «Նարեկ աղօթից», Վենետիկ, 1827, էջ 544:

[40] **Մ. Աբեղյան,** Երկեր, հ. Գ, էջ 580:

[41] **Մ. Օրմանյան,** Ազգապատում, Ա հատ., Գ գիրք, էջ 1181:

չեցին Նարեկ. և անդ հանգուցին զմարմին սրբոյն»[42]: Խոսքը, անշուշտ, վերաբերում է մասունքներ տեղափոխելուն: Նարեկացու գերեզմանը հայրենի Վասպուրականում դարձել էր սրբատեղի:

Դարեր շարունակ հայերն ուխտի են գնացել Նարեկացու շիրիմին: «Նարեկացու շիրիմը,—գրել է մի ուխտավոր,—մինչև 1867 թ. ունեցել է միայն անհիշատակագիր և պարզ ու անպաճույճ քար մը: Բայց նույն թվին Նարեկա վանքի վանահայրը, Հովսեփ վարդապետ, շինել կուտա մարմարյա շիրմաքար մը, որու անարաքարի վրա բարձրաքանդակված է Նարեկացու տեսիլը՝ Աստվածածին Հիսուս գիրկը, իսկ Նարեկացին վեղարավոր և փիլոնով ծունկի եկած անոնց առջև՝ կերկրպագե»[43]: Շիրմաքարին եղել է տապանագիր: Հոդվածի հեղինակն իր ակնարկն ավարտել է այսպես. «Ավերակ ու ամայի են այժմ Նարեկա վանքն ու Նարեկ գյուղը»[44]:

Ավերակ ու ամայի: Գուցե այլևս չկա նաև Նարեկացու շիրիմը՝ նրա աճյունի հողապատյան ծածկոցը: Գուցե չկա, բայց հավերժ կենդանի է նրա հանճարի ոգին, նրա խոսքը, որը, ինչպես ինքն է ասել, պիտի մնա հավերժ՝ իբրև

Արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի...
(Բան ԿԶ, ա)

Հանրագումարի բերելով Նարեկացու կյանքի մասին տեղեկությունները, կարող ենք ասել, որ դեռևս հայտնի չէ Նարեկացու ծննդյան ստույգ տարեթիվը: Ենթադրվում է, որ նա պետք է ծնված լինի շուրջ 945 թվին: Նարեկացու հայրը եղել է հայտնի մատենագիր և հասարակական-եկեղեցական գործիչ Խոսրով Անձևացին: Նարեկացին ունեցել է երկու եղբայր՝ Հովհաննեսը և Սահակը: Գրիգորը եղել է ընտանիքի կրտսերը: Նարեկացու մայրը եղել է Անանիա Նարեկացու եղբոր դուստրը: Հայտնի չէ Նարեկացու մոր անունը: Նա մահացել է երիտասարդ: Հավանական է համարվում, որ Նարեկացին ծնվել է Վասպուրականում, Ռշտունյաց գավառի Նարեկ գյուղում: Հավաստի է, որ նա ուսանել է Նարեկավանքի դպրոցում՝ վանքի հիմնադիր և առաջնորդ, նշանավոր մատենագիր և փիլիսոփա Անանիա Նարեկացու մոտ, որը Նարեկացու մոր հորեղբայրն էր: Նարեկացու ուսումնակիցն է եղել իր անդրանիկ եղբայրը՝ Հովհաննես Նարեկացին: Ուսումն ավարտելուց հետո Գրիգոր Նարեկացին ձեռնադրվել է նախ քահանա և ապա՝ վարդապետ: Գրիգորը տիրապետել է հունարենին: Նա ապրել և ստեղծագործել է Նարեկավանքում, զբաղվել է գրական գործունեությամբ և մանկավարժությամբ: Նարեկացու թվակիր առաջին գործը Երգ երգոցի մեկնությունն է՝ գրված 977 թվին Վասպուրականի Գուրգեն Արծրունի թագավորի պատվերով, վերջինը Մատյանն է, որն ավարտել է 1002 թվին: Գրիգոր Նարեկացին վախճանվել է 1003 թվին, հոկտեմբերի 7-ին: Նարեկացու հորը՝ Խոսրով Անձևացուն, ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն և հենց իրեն՝ Գրիգորին մեղադրել կամ կասկածել են աղանդավորության մեջ: Այս հարցը, սակայն, առանձին քննության նյութ է: Ասենք միայն, որ նրանցից և ոչ մեկն աղանդավոր չէր :

---

[42] **Մ. Չամչյան,** Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 903:
[43] «Արարատ», 1918, Ա—Գ, էջ 140:

Բ
ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՂԱՆԴԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Նարեկացու դարաշրջանը միայն խաղաղության հարյուրամյակ չէր: Սրվել էին դասակարգային հակամարտությունները, նոր թափ ու ծավալ էր ստացել թոնդրակյան շարժումը: Այդ շարժումն ուղղված էր ոչ միայն եկեղեցու, այլև ավատատիրական կարգերի հիմքերի դեմ: Շարժման անունը ծագել է Թոնդրակ ավանի անունից: Թոնդրակը ապստամբների կենտրոնն էր, գտնվում էր Բարձր Հայքում, Տուրուբերանի նահանգի Ապահունիք գավառում:

Թոնդրակեցիները չէին ընդունում եկեղեցու խորհուրդները՝ մկրտություն, զոհաբերություն, հաղորդություն, ժխտում էին հոգու անմահությունը, հանդերձյալ կյանքը, անարգում էին խաչը, մերժում եկեղեցական պսակադրությունը՝ ընտանիքի նախապայմանը համարելով սիրո փոխադարձ զգացմունքը և, որ ամենակարևորն է, չէին ընդունում եկեղեցու դերը մարդու և Աստծու հաղորդակցման միջև: Մարդը կարող էր հաղորդվել Աստծուն անմիջականորեն, առանց միջնորդի: Նրանց գաղափարներն արտահայտում էին ազատ մտածողության, երևույթների աննախապաշար ընկալման նոր տրամադրություններն ու զգացմունքները: Հայոց եկեղեցին անողոք պայքար էր մղում թոնդրակեցիների դեմ: Նա ձգտում էր արմատախիլ անել այդ աղանդը: Բավական էր եկեղեցու մասին, դավանանքի մասին քննադատական մի խոսք, և պատրաստ էր մեղադրանքը: Նարեկացուն կասկածել են աղանդավորության մեջ: Հավանաբար այդ կասկածները հերքելու համար նա հանդես է եկել թոնդրակեցիների դեմ՝ Կճավա վանքի վանահորն ուղղած իր հայտնի թղթով:

Աղանդավո՞ր էր արդյոք Գրիգոր Նարեկացին: Հարո՞ւմ էր արդյոք թոնդրակյան աղանդին: Համոզմունքո՞վ, թե՞ հարկադրաբար է պայքարել թոնդրակեցիների դեմ: Այս հարցերին պատասխանելուց առաջ, անհրաժեշտ է պարզել այն հարցը, թե ինչո՞ւ են Խոսրով Անձևացուն և Անանիա Նարեկացուն կասկածել աղանդավորության մեջ և հալածել: Առանց այսպիսի շրջանցման, անհնարին է թափանցել խնդրի էության մեջ: Իսկ առանց այդ հարցերի լուսաբանման պարզապես թերի կլիներ Նարեկացու դիմանկարը:

Աբեղյանը գրում է, որ Նարեկացու «հայրը՝ Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսը, իր ծերության հասակում բանադրվում է իրեն ձեռնադրող Անանիա Մոկացի կաթողիկոսից իբրև հերձվածող: Նրա ուսուցիչ Անանիա Նարեկացին, ինչպես իր Խոստովանության Գրից երևում է, «մերձ ի մահ վիճակում, ոչ ինքնաբերաբար, այլ կատարելով կաթողիկոսի հրամանը՝ անիծել է թոնդրակեցիներին», ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ Խոսրով եպիսկոպոսի և կաթողիկոսի միջև տեղի ունեցած վեճերից հետո՝ «կարող էր կասկած ծագել և Անանիա Նարեկացու ուղղափառության մասին, քանի որ խնամիական կապեր կային սրա և Խոսրովի միջև և Անանիա Նարեկացուն էր աշակերտում Խոսրովի որդին՝ պատանի Գրիգորը»: Շատ հավանական է, որ նույն կասկածն եղել է և Գրիգոր Նարեկացու մասին, քանի որ սա էլ գրած ունի թուղթ ընդդեմ թոնդրակեցի աղանդավորների»: Աբեղյանի կողմից չակերտված տողերը պատկանում են Գ. Տեր-Մկրտչյանին: Նրանք համակարծիք են, որ կարող էին Գրիգոր Նարեկացուն ևս կասկածել աղանդավորության մեջ: Ա. Ղանալանյանը, սակայն, գաղափարական ուղղակի աղերս է տեսնում, որը, նրա կարծիքով,

«իրականում գոյություն է ունեցել թոնդրակեցիների և Նարեկացու միջև»:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ է բանադրվել Խոսրով Անձևացին: Մի՞թե իսկապես հերձվածող էր: Անանիա Մոկացի կաթողիկոսի և Անձևացու տարաձայնությունները սկսվել են 953—54 թթ.: Կաթողիկոսը Խոսրովին ձեռնադրել էր եպիսկոպոս, տարիներ առաջ, վստահել Անձևացյաց գավառի եկեղեցական վիճակը: Խոսրովը կաթողիկոսի բնութագրմամբ եղել է «համեստ և գիտնաւոր և աղեօք ծերութեամբ զարգացեալ» անձնավորություն, Գրիգոր Նարեկացու զուսպ արտահայտությամբ՝ «յոյժ հետևող պատուիրանացն Աստուծոյ», որի նույնիսկ վարձկան խոզարածը լինելու արժանի չի համարել իրեն:

Դառնալով եպիսկոպոս, Խոսրովը տեսնում է, թե ինչպես է հայոց եկեղեցում, ժամակարգության մեջ, խախտվել շատ բան: Եկեղեցականները չեն հասկանում պատարագի խորհուրդը, աղոթքների նշանակությունը, ըստ հաճության կրճատում են արարողակարգը, չեն հետևում ավանդույթներին: Հիշեցնելով հայոց եկեղեցու հայրերի ընդունած կանոնները, նա վկայակոչում է նաև հունական եկեղեցին, ուր պահպանվում են այդ կանոնները: Բարեփոխությունների այս պահանջները բխում էին հայոց եկեղեցու շահերից: Եղիշե Դուրյանը Խոսրովի երկասիրությունները համարելով «եկեղեցական ընդարձակ հմտությամբ» և ընտիր ոճով գրված գործեր, իրավացիորեն գտնում է, որ դրանք հիմք չեն տալիս հերձվածող համարելու նրան, այլ պատճառը փնտրում է «մեզի անծանոթ շարժառիթներու» մեջ:

Մեզ է հասել Անանիա Մոկացու մեղադրականը: Կիրակոս Գանձակեցին այսպես է վերաշարադրել այն. «Ոչ է պարտ **կիւրակէ** ասել զօրն տէրունի, այլ **կիւռիակէ,** զի հոռոմերէն է,—իբր թե այսպիսի բան է պահանջել Անձևացին,—ասէ. նոյնպէս և հասարակաց թողուլ, ասէր, զգէաս տղայոց և ոչ հատանել մինչև երկայնասցի և **պատ առցէ,** զի վասն այնորիկ, ասէ կոչի **պատանի.** և ապա **կտրել** հրամայէր, զի վասն այնորիկ կոչի **կտրիճ»:**

Ես ընդգծեցի մի քանի բառ, ցույց տալու համար, թե ինչպես է կաթողիկոսը փորձել վարկաբեկել Անձևացուն՝ վեճի էությունը փոխադրելով բառաքննական կասկածելի ոլորտ: Պարզ է՝ սրա մեջ չէ հակամարտության մերանը: Բանաքաղելով Մոկացու թուղթը, Գանձակեցին հասնում է մեղադրանքի գլխավոր կետին. «Եւ ասէր. «Ոչ է պարտ եպիսկոպոսի ընծայաբեր լինել եպիսկոպոսապետի, այսինքն՝ կաթողիկոսի, զի աւելի օրհնութիւն ոչ ունի, ասէ, բայց միայն զանուանակոչութիւնն»:

Սա լուրջ մեղադրանք է: Անձևացին ոչ միայն ընծաներ չի մատուցել կաթողիկոսին, այլև խախտել է իրենց միջև եղած աստիճանակարգի ենթակայությունը: Նա հրաժարվել է այցելել կաթողիկոսին: «Հայոց եպիսկոպոսները,—գրում է Մաղաքիա Օրմանյանը,—պարտավոր էին յուրաքանչյուր տարի կամ գոնե ստեպ-ստեպ կաթողիկոսին մոտ երթալ, թե իբր հպատակության նշանակ և թե իբր հարաբերության դյուրություն, և այս առթիվ իրենց պետք եղած միտոնն ալ ստանալ»: Օրմանյանը ճիշտ է նկատել, որ Խոսրովի հետ կապված տարաձայնությունը կրոնական խնդիր չէր, այլ «պիտի միտինք կրոնական երևույթին ներքև քաղաքական խնդիր մը տեղի ունեցած» ասելու:

Եվ իսկապես, Անձևացին երիտասարդ չէր, որ առանց լուրջ պատճառի թշնամանար իր բարերար կաթողիկոսի հետ: Պատճառն այլ տեղ էր. ապստամբության առաջին օրինակը տվել էր Հակոբ Սյունեցի եպիսկոպո-

սը: Նա սկսում է մեռոն վերցնել ոչ թե հայոց կաթողիկոսից, այլ Աղվանքի Սահակ կաթողիկոսից: Անանիա Մոկացին իր մոտ է կանչում Սահակ կաթողիկոսին և Հակոբ եպիսկոպոսին: Դա եղել է 949 թվին: Չեն գալիս, և Մոկացին ինքն է մեկնում Սյունիք: Հակոբը ներկայանում է կաթողիկոսին և՝ «Մեղաք յերկինս և առաջի քո» ասելով՝ զղջում:

Այս Հակոբը Հովհաննես Դրասխանակերտցու եղբոր որդին էր, ըստ Ստեփանոս Օրբելյանի «այր բարձրահասակ և գեղեցկատեսիլ, հանճարեղ և իմաստուն, քաղցրաբարոյ և հեզամիտ, լի ամենայն առաքինութեամբ»: Օրբելյանը նրա ապստամբությունը կաթողիկոսից բացատրում է հոգեբանական շարժառիթներով. իբր լուրջ պատճառ չկար, այլ միայն «հպարտացեալ սակաւիկ մի»:

Անձևացին և Սյունեցին նամակագրական կապ են ունեցել: Մոկացուն ասել էին, որ Խոսրովին էլ է շեղել «թղթով ի ձէնջ, նաև հերձուածս ևս յօդէին եթէ քօղաբորբեալ ունի զՔաղկեդոնին»: Քաղկեդոնականության մեղադրանքը ժամանակի դավանաբանական փորձաքարն էր: Օրբելյանն ասում է, որ թեև «խռովութիւն և պատերազմ մեծ զարթուցին ի մէջ եկեղեցւոյ», բայց Հակոբը դավանանքից շեղված չէր և քաղկեդոնիկ լինելու պարագան համարում է զրպարտություն: Իրավացի է Մ. Մկրյանը, որ Հակոբը «հաստատապես կարելի է ասել, որ թոնդրակեցի չէր»: Թոնդրակեցի և քաղկեդոնիկ չէր նաև Խոսրով Անձևացին:

Ո՞րն էր, ուրեմն, այդ ապստամբության, ավելի ճիշտ՝ անհնազանդության պատճառը:

Մոկացին պայքարում էր հայոց եկեղեցու միասնության համար: Նա կաթողիկոսարանը Վասպուրականից տեղափոխեց Արգինա՝ Բագրատունիների գահին մոտ լինելու և նրանց օժանդակության վրա ավելի հուսալի հենվելու համար: Իր հերթին կաթողիկոսը պետք է զորավիգ լիներ Բագրատունիներին, նպաստեր նրանց հզորացմանը:

Սյունյաց իշխանները ձգտում էին անջատվել Բագրատունիներից: Հակոբ եպիսկոպոսն էլ ընդառաջում էր նրանց ցանկությանը: Նա մի քանի անգամ փորձեց չենթարկվել հայոց կաթողիկոսին: Գործակցում էր Աղվանից կաթողիկոսի հետ, թեև Աղվանից կաթողիկոսն ինքն էլ ենթակա էր հայոց կաթողիկոսին: Անջատական այս ձգտման մեջ էր իրական պատճառը: Այստեղ կարևորը քաղաքական շարժառիթն էր և ոչ թե կրոնական խնդիրը: Սա էր նաև իրական այն պատճառը, որ Անձևացուն դարձրեց Հակոբ Սյունեցու համախոհ:

Վասպուրականն ուներ իր անկախ թագավորությունը: Հայոց կաթողիկոսարանը գտնվում էր նրա սահմաններում: Մոկացին նախընտրեց աթոռը փոխադրել Ծիրակ: Դա չէր կարող հաճելի լինել Վասպուրականի թագավորին և իշխաններին: Անձևացին, հետևելով Հակոբ Սյունեցու օրինակին, չէր այցելում կաթողիկոսին՝ ընդառաջելով Վասպուրականի անջատական ձգտումներին: Պատահական չէ, որ Անանիա Մոկացուն հաջորդած Վահան Սյունեցի կաթողիկոսը, որին զրկեցին աթոռից, ապաստան գտավ Վասպուրականում:

Եվ այսպես, Խոսրով Անձևացին հերձվածող չէր: Նրա դեմ հալածանքները սկսվել էին հայոց եկեղեցու մեջ խախտված կանոնները և արարողությունները վերականգնելու պահանջից, մի բան, որ չէր կարող հաճելի լինել հոգևորականության մի ստվար մասին, ինչպես նաև անհնազանդության այն քայլից, որ նա փորձել էր դուրս գալ կաթողիկոսի գերա-

գույն իշխանության իրավասությունից՝ կաթողիկոսի և եպիսկոպոսի տարբերությունը, իբր թե, տեսնելով սոսկ անվանակոչության մեջ: Նա քաղկեբերությունը դոնական չէր, բայց բացահայտ համակրանք է տածել հունական եկեղեցու բարեկարգության և ոչ թե հավատի հանգանակի նկատմամբ:

Աղանդավորության մեջ, ինչպես ասվեց, մեղադրվել է նաև Անանիա Նարեկացին: Մինչև այժմ այն կարծիքն էր տիրում, թե այդ մեղադրանքը նա հարուցել է Անանիա Մոկացին: Բանասեր Հրաչյա Թամրազյանը, ձեռագրական տվյալների համակողմանի քննությամբ, վերջերս պարզեց, որ նախ՝ Անանիա Նարեկացուց դավանանքի խոստովանության գիր է պահանջել ոչ թե Անանիա Մոկացի, այլ Խաչիկ Արշարունի կաթողիկոսը (972—992) և, երկրորդ, որ «Գիր խոստովանութեան» թուղթը Անանիա Նարեկացին պետք է գրած լինի 980—987 թթ. միջև:

Անանիա Նարեկացին շատ ծանր է տարել Արշարունու կասկածը, մանավանդ որ նրանք հայրենակիցներ էին, իրար ճանաչում էին ուսման տարիներից և ահա, տարիներ անց, ծերության օրերին, երբ ինքը մահամերձ է. կաթողիկոս ընկերը նրանից պահանջում է դավանանքի խոստովանություն, կասկածում է նրա ուղղափառությանը: Անանիան գրել է դառնացած հոգով, դիմելով ոչ միայն կաթողիկոսին, այլև բոլոր նրանց, ովքեր կասկածել են իմանալ ճշմարտությունը նրա հավատի դավանանքի մասին: «...Ահաւասիկ ածեմ բոլորից լսելեաց ի յայս ձեռնարկութեամբ իմոյ և գրով մատանց իմոց, մա՛նաւանդ քե՛զ, իրա՛ւդ անիրաւութեամբ և ծանա՛ւթդ ոչ ծանաւթիս, սննդակի՛ցդ աւտարացեալ, և ի ծննդենէ տէր գոլով մինչև ի ծերութիւն՝ ծառայի անտեղեակ բարուց և հաւատոց», սրտաշարժ անկեղծությամբ հայտարարում է Անանիան և նզովում բոլոր հին ու նոր հերձվածողներին, այդ թվում և թոնդրակեցիներին:

Եվ այսպես, աղանդավոր չէր նաև Անանիա Նարեկացին: Բայց ի՞նչն էր հարուցել այդ կասկածը: Բացատրել Անձևացու հետ ունեցած խնամական կապերով, համոզիչ չէ: Մ. Մկրյանը գտնում է, որ կասկածի համար հիմք կարող էր լինել այն, որ «նա հավանաբար միստիկ էր կամ ուներ միստիկական հակումներ», իսկ դա կարող էր «կաթողիկոսի կողմից հեշտությամբ որակվել որպես հնարավոր աղանդավորության արտահայտություն»: Մկրյանը միստիցիզմը մեկնաբանում է որպես ավատատիրության դեմ ուղղված հեղափոխական պայքարի ձև, ելնելով Ֆ. Էնգելսի հայտնի դրույթից: Անանիայի միստիցիզմը, սակայն, բխում էր նրա բարեպաշտությունից և չուներ ոչ հակաեկեղեցական և ոչ էլ, առավել ևս՝ հեղափոխական բնույթ: Նրա միստիցիզմը հանգում էր հոգեկան ապրումների ծայրահեղ լարվածությամբ «Քրիստոս զգենալուն»: Մարդու բարոյական ինքնակատարելագործման մեջ Անանիան մեծ տեղ էր տալիս անհատի անձնական ձգտմանը՝ հոգու փրկության հասնելու ճանապարհին: Ըստ նրա՝ մարդը կարող է մեղքերից մաքրվել և կատարելության հասնել ոչ թե արտաքին բարքի ու պատվիրանների պահպանմամբ միայն,—դա քիչ էր,—այլ ներքին մարդու, հոգու նկարագրի վերափոխման շնորհիվ, աստվածաճանաչողության լույսին անընդհատ ձգտելու և մոտենալու շնորհիվ: Անանիան մարդու հայացքն ուղղում է դեպի սեփական հոգին, շեշտում է սեփական նախաձեռնության դերը մարդու բարոյական վարքագծի վերափոխման մեջ: Նա ձգտում է, որ աստվածապաշտությունը դառնա հոգեկան պահանջ, աղոթքը լինի հուզականորեն հագեցած, բխի կենսափորձից, արցունքը մաքրի հոգին: Սա չէր հակասում քրիստոնեական ուսմունքին,

առավել ևս՝ չէր հակադրվում եկեղեցուն, բայց դուռ էր բացում աշխարհիկ մտածողության խորացման համար, մի բան, որ չէր կարող վրիպել հայոց եկեղեցու ապաստավորների հոգեխույզ աչքից: Ավելի հեշտ էր Անանիային մեղադրել աղանդավորության մեջ, քան հետևել նրա պահանջներին: Հոգու փրկության հանելու նպատակը Անանիան չի կապում բացառապես պատվիրանապահության հետ, այլ մեծ տեղ է տալիս անհատի հոգևոր կյանքին, նրա ձգտումներին, նրա ներհայեցությանը: Անհատական այդ սկիզբը չէր կարող հաճելի լինել եկեղեցուն:

Վերադառնանք Գրիգոր Նարեկացուն: Ինչո՞ւ են նրան կասկածել աղանդավորության մեջ: Անշուշտ, այդ կասկածը կարող էր ծագել ժամանակին հայտնի այն իրողությունից, որ աղանդավորության մեջ մեղադրվել է նրա հայրը՝ Անձևացին, ինչպես նաև ուսուցիչը՝ Անանիա Նարեկացին: Բայց ինչպես տեսանք, աղանդավոր, առավել ևս՝ թոնդրակեցի չէին ոչ Անձևացին և ոչ էլ Անանիան: Նրանք անբասիր էին իրենց դավանանքի մեջ: Անձևացին ձգտում էր բարեփոխություններ մտցնել հայոց եկեղեցու մեջ, վերականգնել խախտված կանոնները և, ընդառաջելով Վասպուրականի անջատական ձգտումներին, հակադրվեց կաթողիկոսին: Անանիա Նարեկացին ձգտում էր կրոնական զգացմունքը դարձնել ներքին պահանջ, հոգու փրկության և բարոյական կատարելագործման մեջ մեծ տեղ տալով անհատի նախաձեռնությանը: Նրանք ուզում էին նորություն ու թարմություն մտցնել ներեկեղեցական կյանքում՝ ժամանակի ոգու համաձայն:

Գրիգոր Նարեկացին մտածող էր և բանաստեղծ: Ավելի հեշտ էր նրան կասկածել աղանդավորության մեջ, քան ուղղակի մեղադրանք հարուցել նրա դեմ: Հայամավուրքի այն վկայությունը, թե «Եւ զի ջան և փոյթ էր սրբոյն վասն միաբանութեան եկեղեցեաց, զի զերծեալ և անփոյթ արարեալ կարգս եկեղեցւոց սրբոց ի ծուլից և ի մարմնասէր առաջնորդաց կամէր հաստատել և վերստին նորոգել»,—հեռու չէ պատմական ճշմարտությունից: Նարեկացին, ուրեմն, ջանք չի խնայել եկեղեցիների միաբանության, նրանց խախտված կարգելու վերստին նորոգելու համար:

Եկեղեցիների միաբանության խնդիրն ավելի խոր իմաստ ունի, քան կարելի է կարծել առաջին հայացքից: Դա, ըստ իս, վերաբերում էր ոչ միայն հայոց ներեկեղեցական հակասություններին, այլև հայ, հույն, վրացի, լատին, աղվան և, առհասարակ, քրիստոնեական եկեղեցիների միաբանությանը: Այս միտքն ինձ հուշում է Ներսես Լամբրոնացու ատենաբանության այն հատվածը, ուր նա եկեղեցիների միության կողմնակից հին վարդապետների շարքում հիշատակում է նաև Նարեկացուն. «յորոց մի էր և իմն աստուածաշնորհ և յոքունց գերազանց» Գրիգոր Նարեկացին: Եկեղեցիների միաբանության մեջ Նարեկացին տեսնում էր քրիստոնեական գաղափարախոսության հիմքերի անսասանության երաշխիքը: «Մի քրիստոնեայ անուանիմք, և ի մի շաւղաց վերայ հետևիմք, և յիրերաց ճանապարհակցութենէ խելագարեալ զարհուրիմք», գրում է Լամբրոնացին: Ըստ նրա՝ այսպես է մտածել նաև Գրիգոր Նարեկացին: Նարեկացու լայնախոհությունը, սակայն, ժամանակին կարող էր որակվել որպես քաղկեդոնականություն: Հայամավուրքի այն վկայությունը, թե բիրտ և անկիրթ մարդիկ «համբաւէին զնա ծայթ», այսպես էին արհամարհանքով կոչում քաղկեդոնիկ հայերին,—Նարեկացու հակառակորդների համար համարժեք էր դավանափոխության: Մինչդեռ Նարեկացին ոչ աղանդավոր էր և ոչ էլ թոնդրակեցիների համակիր:

Նարեկացին դատապարտում է թոնդրակյան շարժումը եկեղեցու դիրքերից: Նա չի բաժանում նրանց հայացքները: Նարեկացին ասում է, որ նրանք չէին ընդունում ձեռնադրությունը, «զոր առաքեալքն ի Քրիստոսէ ընկալան» որ նրանք արժանի են արգահատանքի ոչ միայն եկեղեցականների կողմից, այլև հեթանոսների, որովհետև մարդապաշտ են և ոչ թե աստվածապաշտ. «ոչ միայն եկեղեցականաց, այլև հեթանոսաց են անգոսանելիք»: Թոնդրակեցիներն իրենց աղանդապետ Սմբատ Զարեհավանցուն Քրիստոս էին կոչում: Ոչ թե աստվածացնում էին նրան, այլ, ընդհակառակը, Քրիստոսին ևս համարում էին նրան հավասար երկրածին: Նարեկացու համար դա ավելի գարշելի էր, քան կռապաշտությունը: Նրանց այդ գաղափարը Նարեկացին համարում է «մարդապաշտ ուրացութիւն»: Նարեկացին անսքող ատելությամբ է խոսում թոնդրակեցիների մասին: Բայց մտածել, թե իր պայքարի մեջ Նարեկացին ելնում է միայն եկեղեցու շահերից,—կլիներ սխալ և միակողմանի: Նարեկացին հանդես է գալիս հայ ժողովրդի համազգային շահերի դիրքից: Պատմական զարգացման ընթացքը պահանջում էր ստեղծել կենտրոնացված ուժեղ պետություն: Մինչդեռ Հայաստանը տրոհվում էր կենտրոնախույս ուժերի և միջիշխանական ու թագավորական պառակտիչ հակամարտություններից: Թոնդրակյան շարժումը պայքար էր աշխատավորական զանգվածների և իշխող դասերի միջև: Որքան էլ այդ շարժումը նշանավորեր «ժողովրդական լայն զանգվածների ինքնագիտակցության բարձր մակարդակը», ինչպես գրում է Բ. Առաքելյանը, իրականում խորացնում էր երկրի հասարակական-քաղաքական ճգնաժամը: Իբրև քրիստոնեական հումանիզմի գաղափարախոս՝ Նարեկացին չէր կարող հանդուրժել ոչ մի ապստամբություն, եղբայրների միջև որևէ թշնամություն, աղանդավորական որևէ պայքար: Իր պայքարի մեջ Նարեկացին ելնում էր ինչպես հայոց եկեղեցու, այնպես էլ հայ ժողովրդի միասնության շահերից: Բայց Նարեկացին չէր լինի իսկապես մեծ բանաստեղծ, եթե նրա ստեղծագործության մեջ չանդրադառնար իր դարի հիմնական հակամարտությունը: Հենց այն հանգամանքը, որ բանաստեղծն իրեն է վերագրում աստվածամարտ մտքեր, իրեն համարում ապստամբ ու աստվածուրաց,—հենց դրանով էլ նա արտահայտում է իր դարի ըմբոստ հոգիների դժգոհությունը իրականությունից: Նարեկացին թոնդրակյան չէր: Բայց նրա ստեղծագործության մեջ, անուղղակի, կա այդ շարժման գեղարվեստական արձագանքը: Մի՞թե Տոլստոյը չէր ռուսական հեղափոխության հայելին՝ առանց հեղափոխական լինելու:

Կասկածը կարող էր ծագել նաև ներեկեղեցական բարեփոխությունների պահանջից: Նարեկացին ձգտում էր թարմացնել ժամակարգությունը, արարողությունը դարձնել հարուստ ու հետաքրքիր: Նա, ըստ երևույթին, աշխատում էր կենսագործել Անանիա Նարեկացու պահանջը. աղոթքը դարձնել Աստծո հետ հաղորդակցման խոհ, զգացմունք ու տրամադրություն: Հին շարականները բավական չէին: Նրանց վերացական ու սակավահույզ պատկերներին Նարեկացին հակադրեց բնության կենդանի շնչով համակված ու քնարական ջերմությամբ տոգորված իր երգերը: Այդ երգերը «նոր երևույթ լինելով հոգևոր պաշտոնական գրականության բնագավառում,—ինչպես գրում է Աս. Մնացականյանը,—իրենց թեմաներով և այլ արժանիքներով մի աստիճան բարձր էին շարականային երգերի մակարդակից»: Գեղարվեստական այդ նոր որակը, որ նշանավորում էր

բանաստեղծության աշխարհականացման նոր սկիզբ, չէր կարող ընդունվել առանց դիմադրության:

Եվ, վերջապես, կասկածը կարող էր ծագել Նարեկացու միստիցիզմից: Այդ միստիցիզմը չուներ ոչ հակաեկեղեցական և ոչ էլ, առավել ևս՝ հերետիկական բնույթ: Դա բխում էր Նարեկացու կրոնական զգացմունքներից և նորպլատոնական աշխարհայեցությունից: Նարեկացու համար եկեղեցին Քրիստոսի մաքուր մարմինն էր, ինքը՝ Քրիստոսը, նրա գլուխը: Նրանք պաշտելի էին հավասարապես: Սակայն ինչպես Անանիա Նարեկացուն, այնպես էլ Գրիգոր Նարեկացուն մտահոգում էր այն վիճակը, որ հավատը դարձել էր ոչ թե սրտի զգացմունք, հոգու աշխարհ, այլ ծես, անհաղորդ արարողություն: Կրոնաբարոյական իդեալը չէր գրավում մարդկանց: Անհրաժեշտ էր անձնականացնել կրոնական զգացմունքը, խորացնել մեղքի գիտակցման, զղջման, ապաշավության ապրումները: Սա ներքին մարդու բարոյական ինքնակատարելագործման նույն պահանջն էր, որ Անանիա Նարեկացուց փոխանցվեց Գրիգոր Նարեկացուն: Անհատի և Աստծու միջև հաղորդակցման անմիջական, անձնական կապի պահանջը, Գրիգոր Նարեկացու հակառակորդները, իհարկե, կարող էին աղերսել աղանդավորության հետ:

Եվ այսպես, Գրիգոր Նարեկացուն կասկածել են աղանդավորության մեջ, քանի որ նա՝ 1-ին, պաշտպանել է քրիստոնեական ընդհանրական եկեղեցու միաբանության գաղափարը, 2-րդ, աշխատել է բարեփոխություններ մտցնել հայոց եկեղեցու ներքին կարգերի մեջ և, 3-րդ, նրա ստեղծագործության մեջ արտահայտություն են գտել կյանքի, մարդու և բնության մասին նոր գաղափարներ ու զգացմունքներ: